

Տգերի և ոջիլների նկատմամբ իրականացվող պայքարի միջոցառումները

Տգերով և ոջիլներով վարակվում են բոլոր տեսակի ընտանի կենդանիները: Տգերի և ոջիլների դեմ պայքարի միակ արդյունավետ եղանակը դա կանխարգելիչ միջոցառումներն են:

1. կանխարգելիչ միջոցառում հակապարազիտային դեղամիջոցներով
2. պայքար անմիջապես կենդանիների վրա
3. անասնագույների և տարածքի ախտահանում:

Կանխարգելիչ միջոցառումն իր մեջ ներառում է ախտահանություններ, պարբերաբար ցողարկումներ:

Տգերի և ոջիլների դեմ արդյունավետ պայքարի միջոց են ժամանակին իրականացված միջոցառումները՝ հակապարազիտային դեղամիջոցների օգտագործմամբ (հիմնականում ներարկման միջոցով):

Պարազիտային հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների ժամանակացույցը, օգտագործվող դեղորայքները ներկայացված են աղյուսակներ 5-7-ում:

Պայքարը անմիջապես կենդանիների վրա. Արտաքին պարազիտների դեմ պայքարի մյուս արդյունավետ եղանակն է կենդանիների արտաքին մշակումը տղասպան նյութերով: Փոքր ֆերմաներում կարելի է կիրառել կենդանիների արտաքին մշակման երկու եղանակ.

- խոնավ մշակում՝ օգտագործելով տղասպան նյութերի լուծույթներ:
- չոր՝ սա ներարկումներն են, որոնք անում են ցուրտ եղանակներին:

ԽՈՐՀՈՒՐԴ

Կենդանիների արտաքին մշակման համար կարող էք օգտագործել հետևյալ տղասպան նյութերի լուծույթներ.

- նեոցիդոլ 1:1000
- ռացիդոլ 1:1000
- 0.2% բենզոֆոսֆատ,
- 1% քլորոֆոս,
- 0.5% ցիոդրին,
- 0.85% սեվին,
- 0.025-0.05% ցիպերմետրին և այլն:

Արոտային շրջանում մշակումները կատարում են 7-10 օր ընդմիջումներով, մեկ խոշոր կենդանու վրա ծախսելով 2-3լ, մատղաշի վրա՝ 1-1.5լ տղասպան լուծույթ: Մշակումը կատարվում է կենդանիներին մինչև արոտավայր հանելը, առավոտյան ժամերին:

Տգերով թույլ պատվածության դեպքում նրանց կարելի է հեռացնել կենդանու մաշկից աքցանների կամ էլ մասների միջոցով՝ նախօրոք նրանց կպչելու տեղին քսելով վազելին կամ կերոսին: Այս եղանակով հիմնականում հեռացնում են արյամբ հագեցած տզերին:

Պայքարը անասնաշենքերում. Անասնաշենքերում տզերի նկատմամբ օգտագործում են հետևյալ հակատզային/միջատասպան նյութերը.

- քլորոֆոսի՝ 1-2%,
- բենզոֆոսֆատի՝ 0.25%,
- դիբրոմի՝ 0.2%,

- դիագնոզի` 0.1%,
- կարբոֆոսֆի` 0.5%,
- ցիտոդինի` 1%,
- սելվինի` 1%,
- ստոմագինի 0.025-0.05%

Վերջիններս ցողարկում են ԼՄԴ-3մ, ԴՈԻԿ-2, ՈԻԴՊ-2, ՄՊԸ-2 սարքերի օգնությամբ: Այս սարքերի բացակայության դեպքում օգտագործեք ինքնաշեն սարքեր կամ ավել: Պատերի, առաստաղի, հատակի և սարքավորումների 1 մ² մշակման համար օգտագործում են 100-300 մլ լուծույթ: Հակատզային միջոցառումները անցկացնելուց առաջ շենքից հեռացնում են կենդանիներին և սպասարկող անձնակազմին: Միջոցառումից 3-4 ժամ հետո շենքը օդափոխում են, իսկ կերամանները և ջրամանները լվանում են տաք ջրով:

Մակաբուծային հիվանդությունների կանխարգելումը

Ինչպես տեսաք բոլոր մակաբուծային հիվանդությունների համար կատարվող պայքարի միջոցառումները ունեն ընդհանրություններ, այսինքն` կատարելով մի միջոցառում, Դուք կկանխարգելեք միանգամից մի քանի մակաբուծային հիվանդություններ: Օրինակ` տալով ալբեն, Դուք կկանխարգելեք կենդանու բոլոր ճիճվային հիվանդությունները և այլն:

Որպեսզի ձեր կենդանիները զերծ մնան մակաբուծային հիվանդություններից, անհրաժեշտ է, որ իրականացնեք համալիր կանխարգելիչ միջոցառումներ, որոնք պայքարի միակ արդյունավետ եղանակն են հանդիսանում: **Կանխարգելիչ միջոցառումները** իրենց մեջ ներառում են.

1. կանխարգելիչ միջոցառում հակապարազիտային դեղամիջոցներով,
2. պայքար անմիջապես կենդանիների վրա,
3. անասնագումերի և տարածքի ախտահանում:

Պարազիտային հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների ուղեցույց.

Աղյուսակ 5

Դեղորայքների ներմուծման եղանակները	Իրականացման ժամանակացույցը	Դեղորայքի անվանումը և չափաբաժինը
Ճիճվաթափություն հարերով	Տարին 3 անգամ 1. ապրիլ-մայիս 2. օգոստոս-սեպտեմբեր 3. դեկտեմբեր-հունվար	Ալբեն ԽԵԿ-ին` 1 հաբը 35-50 կգ կենդանի քաշին ՄԵԿ-ին` 1 հաբը 45-70 կգ կենդանի քաշին
Ճիճվաթափություն ներարկման միջոցով	Տարին 3 անգամ 1. ապրիլ-մայիս 2. օգոստոս-սեպտեմբեր 3. դեկտեմբեր-հունվար	Իվերմեկ ԽԵԿ-ին և ՄԵԿ-ին 1 մլ 50 կգ կենդանի քաշին
Կենդանիների արտաքին մշակում	Տարին 3 անգամ 1. ապրիլ-մայիս 2. օգոստոս-սեպտեմբեր 3. դեկտեմբեր-հունվար	Սեոցիդոլ 1:1000-ի լուծույթ կամ Քլորոֆոս-1%-ոց լուծույթ:
Անասնագումերի ախտահանություն	Տարին 2 անգամ 1. կենդանիներին արոտ հանելուց հետո 2. աշնանը` ներս բերելուց առաջ	Քլորոֆոս-1-2%-ոց լուծույթ կամ Սեոցիդոլ 1:1000-ի լուծույթ 1մ ² տարածքի մշակման համար անհրաժեշտ է 100-300 մլ ախտահանիչ լուծույթ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Յուրաքանչյուր անասնապահական ֆերմա պետք է իրականացնի պարագիտային հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումներ,
- Շատ կարևոր է կանխարգելիչ միջոցառումները կատարել **ճիշտ ժամանակին**,
- Շատ կարևոր է կանխարգելիչ միջոցառումները կատարել **ճիշտ եղանակով**, այսինքն պահպանել դեղորայքի չափաբաժինները, **կենդանիների արտաքին մշակման և անասնագուների ախտահանության կանոնները**:
- Միայն եղանակով իրականացված միջոցառումները **կլինեն անարդյունավետ**: Դրանց արդյունքը կլինի **Ձեր գումարների և ժամանանակի անտեղի վատնում**:
- Եթե որևէ հարցեր ունենաք միջոցառումների իրականացման հետ կապված կարող եք դիմել **Ձեր համայնքային անասնաբույժին**:

Հակացուցում կենդանիների արտաքին մշակման համար

Արգելվում է իրականացնել կենդանու արտաքին մշակում գյուղատնտեսական մշակաբույսերի համար նախատեսված միջատասպան նյութերով: Նշված նյութերի օգտագործումը կարող է դառնալ կենդանու և ձեր ընտանիքի անդամների թունավորման պատճառ:

Անասնաշենքերի ախտահանության կանոնները

- Ցանկացած ախտահանություն անցկացնելուց առաջ պետք է անասնաշենքից **հեռացնել կենդանիներին և մարդկանց**:
- Նախքան ախտահանության իրականացումը անասնաշենքում անհրաժեշտ է կատարել **մեխանիկական մաքրում**, դա նշանակում է, որ պետք է հեռացնել անասնապահական պարագաները, պատերի և առաստաղի փոշին ու կենդանիների կղանքը:
- Քանի որ ախտահանիչ լուծույթները մարդու առողջության համար վնասակար են, ապա ախտահանություն իրականացնելու համար պետք է ունենալ **պաշտպանող արտահագուստ` դիմակ, ակնոց, ռետինե ձեռնոցներ և պոլիէթիլենային (ցելոֆանե) հագուստ**:
- Որպեսզի ախտահանությունը լինի արդյունավետ անհրաժեշտ է պատերը, առաստաղը, գույքը ցողարկել այնպես, որ **ախտահանիչ լուծույթը թափանցի նաև դրանց ճեղքերի և անցքերի մեջ**: Արդյունավետ է ախտահանությունը կատարել ցողարկիչներով, վերջիններիս բացակայության դեպքում` ավելով:
- Միջոցառման ժամանակ **հերմետիկ փակել անասնաշենքի դռները և պատուհանները** ու թողնել 2-3 օր:
- Նշված ժամանակից հետո **կատարել անասնաշենքի օդափոխություն`** բացելով դռներն ու պատուհանները:
- **Կերամանները և ջրամանները լվանալ տաք ջրով**:
- Ցանկալի է կենդանիներին անասնաշենք թողնել ախտահանության հաջորդ օրը:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Անասնապահությունում մակաբուծային հիվանդությունները կանխարգելելու համար լայն կերպով օգտագործում են կենսաբանական և քիմիական մեթոդներ:

Կենսաբանականը, երբ անմիջականորեն ազդում են մակաբուծների ձվերի, թրթուրների, ինչպես նաև միջանկյալ տերերի և փոխանցողների վրա: Կենսաբանական մեթոդների թվին են պատկանում հողերի վարը, արոտավայրերի

փոփոխումը. առանձնացվում են անապահով տարածքները, հավաքում են քարերը, կտրում են թփուտները, գոմաղբը ենթարկում են կենսաջերմային մշակման (լցնում են փոսի մեջ և ծածկում են հողով):

Քիմիական. օգտագործում են երկարատև ազդեցությամբ օժտված միջատասպան և տգասպան նյութեր: Ներկայումս անասնաբուժության մեջ լայն կիրառություն են ստացել նեոցիդոլ, իվերմեկ, քլորոֆոս, կարբոֆոս, ցիդեկտին, պարավետ և այլ պատրաստուկներ: Քիմիական դեղամիջոցները լայն տարածում են գտել ճիճվային հիվանդությունների կանխարգելման բնագավառում:

Կանխարգելիչ միջոցառումներում մեծ տեղ է հատկացվում անասնաշենքերի սանիտարական վիճակին, հատկապես՝ հատակին, կերամաններին և պատերին: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև խմելու ջրի որակին:

Այլ օգտակար խորհուրդներ պարագիտային հիվանդություններից զերծ մնալու համար.

- Արգելվում է կենդանիներին ջրել կանգնած ջրամբարների և ճահիճների ջրով:
- Արոտավայրերում ստեղծվում են կենդանիների ջրման հատուկ ավազաններ: Պետք է բարելավել կենդանիների կերակրման և խնամքի պայմանները: Այդպիսի պայմաններում կենդանիները գրեթե չեն հիվանդանում մակաբուծային հիվանդություններով:
- Ցիստիցերկոզներ, էխինոկոկոզ և այլ հիվանդությունները կանխարգելելու նպատակով ֆերմաները սպասարկող անձնակազմը տարեկան 2 անգամ պետք է ենթարկվի բժշկական ստուգման: Ֆերմաներին և արոտավայրերին կից՝ մարդկանց համար պետք է կառուցվեն զուգարաններ: Անհրաժեշտ է տնտեսություններում կրճատել շների գլխաքանակը, նրանց 45 օրը մեկ անգամ ենթարկել ճիճվաթափության:
- Պարագիտային հիվանդություններից զերծ մնալու համար, հատկապես այն հիվանդություններից, որոնք փոխանցվում են մսի միջոցով (տավարի և խոզերի ցիստիցերկոզներ, խոզերի տրիխինելլոզ և այլն), անհրաժեշտ է միսը եփելուց կամ խորովելուց կիսահում չթողնել, այնպես անել, որ եփվեն նաև մսի խորը մասերը:

Աղյուսակ 6-ում կարող եք գտնել պարագիտային հիվանդությունների բուժման համար նախատեսված արդյունավետ դեղամիջոցների ցանկը: Իսկ աղյուսակ 7-ում ներկայացված են ներկայումս լայն օգտագործվող երեք դեղամիջոցների՝ Ալբենի, Նեացիդոլի և Իվերմեկի, ազդեցության շրջանակները (այսինքն, որ հիվանդությունների դեմ են արդյունավետ):

Որոշ պարագիտային հիվանդությունների բուժման և կանխարգելման համար արդյունավետ դեղամիջոցների օգտագործումը

Աղյուսակ 6

Հիվանդության անվանումը	Արդյունավետ Դեղամիջոցներ
Ներքին պարագիտներ	
Ֆասցելլոզ	Ալբեն,
Էխինոկոկոզ	Չկան
Սոնեզիոզ	Ալբեն,
Պիրոպլազմոզ (արյան պարագիտային հիվանդություն)	Ազիդին, պիրոպլազմին, տրիպան կապույտ, տրիպոնիլ
Հորթերի նեոասկարիոզ	Ալբեն,
Պարամֆիստոմատոզ	Ալբեն,

Ցիստիցերկոզներ	Չկան
Բոռ	Իվերմեկ, հիպոդեկտին, քլորոֆոս, նեոցիդոլ, ռացիդոլ
Արտաքին պարազիտներ	
Տիզ	Նեոցիդոլ, իվերմեկ, քլորոֆոս, սեվին
Ոջիլ	իվերմեկ, նեոցիդոլ, քլորոֆոս, սեվին,

Որոշ դեղամիջոցների ազդեցության շրջանակները պարազիտային հիվանդությունների վրա

Աղյուսակ 7

Հիվանդության անվանումը	Հիվանդության ընկալունակ կենդանիներ	Ալբեն	Իվերմեկ	Արտաքին մշակում Նեոցիդոլով
Ներքին պարազիտներ				
Ֆասցելլոզ	ԽԵԿ և ՄԵԿ	+	-	-
Էխինոկոկոզ	Բոլոր գ/տ կենդանիները	-	-	-
Մոնեզիոզ	ԽԵԿ -ի և ՄԵԿ -ի մատղաշ	+	-	-
Պիրոպլազմոզ (արյան պարազիտային հիվանդություն)	ԽԵԿ և ՄԵԿ	-	-	-
Հորթերի նեոասկարիդոզ	Հորթեր	+	-	-
Պարամֆիստոմատոզ	ԽԵԿ	+	-	-
Ցիստիցերկոզներ	ԽԵԿ, խոզեր և ՄԵԿ	-	-	-
Թելազիոզ			+	
Դիկտիոկաուլյոզ			+	
Բոռ	ԽԵԿ և ՄԵԿ	-	+	+
Արտաքին պարազիտներ				
Տիզ	Բոլոր գ/տ կենդանիները	-	+	+
Ոջիլ	Բոլոր գ/տ կենդանիները	-	+	+

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եթե Ձեր ֆինանսական միջոցները սուղ են, կարող եք կատարել կանխարգելիչ ներարկումներ իվերմեկով տարեկան առնվազն երկու անգամ՝ մինչև արոտ հանելը և մտուրային շրջան անցնելուց առաջ: Իվերմեկը ոչնչացնում է բոլոր այն պարազիտներին, որոնք գտնվում են նոր զարգացման (իմագոյի) շրջանում, այսինքն, եթե Ձեր կենդանին նոր է վարակվել պարազիտների ձվերով և թրթուրներով: